





Էտկար Շահին:

«Նկարիչ և փորագրող հայ երիտասարդ մը, պր. Էտկար Շահին, որու զանազան պատկերները Անաթոլ Խրանսի երկերուն մէջ ծանօթ են արդէն, կը ցուցադրէ այժմ Դըվամբէզի թանգարանին մէջ՝ կապարանկարներ (pastel) և ժանտաջուրի պատկերներ՝ (eaux-fortes) անհամեմատօրէն հաճելի, որոնք աւելի ևս կը հաւաստեն և կը հռչակեն՝ հրաշագեղ երփներանգները վարպետ վրձնին:

Իւր նկերուն ընտրութեամբը, իւր վստահ գծագրութեամբը, իւր փողփողնէջ գոյներուն դասաւորութեամբը՝ պիտի կարենայինք պր. Էտկար Շահինը համեմատել Ֆէլիսիէն Ռոփսի և Թուլուզ-Լոթրէքի հետ, եթէ նա այս երկուքէն ալ չզանազանուէր իսկապէս՝ իմաստովն և արտայայտութեամբը իւր քարտրուիթիւններուն:

Չունի բնաւ ներացնելու ջանքեր, ոչ՝ դիտումն տալու բարոյական արտայայտութիւն, ոչ հեզնութիւն, ոչ դաժանութիւն: Ամենայանկուցիչ դրականութեամբ կը ներկայացնէ թեթեալարոյ դեռատի անձեր՝ ամէնքն ալ երիտասարդ. նա կը սիրէ ա-

նոնց թարմ երիտասարդութիւնը միայն ցուցադրել:

Իւր տիպարները, շնորհալից չարամուտ թեան հասակն ունին. դեռ ևս չպարուած չեն անոնք, և իրենց ժպիտը, երեսի գոյնը, նայուածքը՝ չունին բնաւ նենգութիւն, չունին թունալից՝ ցաւազար՝ կարեկցելի՝ ողորդական երևոյթներ:

Եթէ պ. Շահինի կապարանկարները տեսնելով՝ առանց իսկ ուզելու և անմիջապէս՝ Լոթրէքը կ'երազենք, առոր պատճառը իւր բազմաձիր գոյներուն ճոխութիւնն և ներդաշնակութիւնն է: Եթէ իւր ժանտաջուրանկարներուն առջև Ռոփսը և Լոթրէքը, առոր շարժառիթը սերտ կապակցութիւնն է՝ իւր պատկերներուն ճշգրիտ չափակցութեանը, և շնորհազեղ տեսքը իւր գոյներուն՝ մինչև իսկ սևին:

Դիմանկարներուն առնթներ, շարք մը կապարանկարներ՝ Բրեհատ (Bréhat) կղզիին տեսարանները ցոյց կու տան: Վարդագոյն կարծրաքարերէ (granit) փոքրիկ տնակներ, կապոյտ ծովախորշեր, արծաթագոծ կաղնիներ, ալիքներէ ջախջախուած ժայռեր, ու վերջապէս՝ համախումբ մը ներդաշնակութեանց՝ երկնքի, ծովու, կապոյտի, կանաչի, թխորակի, վարդագոյնի, կարմրի:

Իւր տեսարաններն ալ կը քարոզեն որ իրենց վարպետը՝ կ'որոնէ բնութեան մէջ իւր բերկրանքը՝ ամանակին քաղցրացումը՝ ժամուն գեղեցկութիւնը միայն:

Պր. Շահին՝ թէ՛ ժանտանկարի և թէ՛ փորագրութեան մէջ (pointe sèche) մի և նոյն յաջողութեամբ կ'ողակորէ իւր շրջապայութիւնները ի փարիզ: Ահա տոն մը Լիլլէքերտրգի պարտիզին մէջ, — նկարչական անկիւնները Բիւր — Շամբլի. — Առանկն արտարձանները, — Սուրբիտոյ պողոտան, — Ռեյոյի բաղը, — Մուրք Սերմեն-ի՝ Օքսըտուայի տեսարան մը, ևայլն:

Ցուցահանդէսը՝ որուն բացումը երէկ տեղի ունեցաւ, պիտի մնայ մինչև 31 Յունուար.

— ֆ. յ. »

(Փարիզու Ժողովուրդի Դէպքայ կարեւոր օրագրի 20 երրորդ թուէն թարգմ.)

Հ. ԳՐԻՍ. ԱՅՏԵՆԱՆ